



**Կարգապահական գործ թիվ ԿԳ-21009**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2021թ-ի սեպտեմբերի 14-ի թիվ 288-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ԹԻՎ ԿԳ/170-Ա**

**ՓԱՍՏԱՔԱՆ ԱՆԺԵԼՅԱ ՎՈԼՈՂՅԱՅԻ ՀՈՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Արսեն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Հարություն Հարությունյանի, Կարեն Սարգսյանի, Կարեն Մեժլումյանի, Ռուբեն Հակոբյանի, Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրջյանի կազմով, քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի, քննության առնելով փաստաբան Անժելյա Վոլոդյայի Հորոսյանին (արտոնագիր՝ 52) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

**Պ Ա Ր Ձ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

ՀՊԳ ղեկավար Մելանյա Առուստամյանը, (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ ՀՀ ՓՊ հանրային պաշտպանի գրասենյակում մուտք է արվել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ԲԿ-ի կալանավոր Գարսևան Նորիկի Գևորգյանի (**այսուհետ՝ նաև Ամբաստանյալ**) 03.02.2021թ. դիմումը (**այսուհետ՝ Ամբաստանյալի դիմում**), որով վերջինս բողոք է ներկայացրել հանրային պաշտպան Անժելյա Հորոսյանի (**այսուհետ՝ նաև Փաստաբան կամ հանրային պաշտպան**) դեմ: Ամբաստանյալը հայտնել է, որ փաստաբանը չի կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ 2019թ-ից իր պաշտպանը հանդիսացող Անժելյա Հորոսյանը միայն մեկ անգամ է իրեն հանդիպել քրեակատարողական հիմնարկում և իր վերջինիս նա տեսել է միայն հազվադեպ կայացող դատական նիստերին:

ՀՊ գրասենյակում կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՊԳ ղեկավարի 29.04.2019թ. որոշմամբ Ամբաստանյալի վերաբերյալ գործը հանձնվել է

Փաստաբանին, որից հետո վերջինս միայն մեկ անգամ է հանդիպել Ամբաստանյալին քրեակատարողական հիմնարկում՝ 2021թ. հունվարի 19-ին:

ՀՊԳ ղեկավարը տեղեկացել է նաև, որ թիվ ԵԴ/0226/01/19 գործով Անժելյա Հոբոսյանը առաջին ատյանի դատարանի 2020թ. հունիսի 24-ի թվով երկու որոշումների դեմ բերել է մեկ վերաքննիչ բողոք՝ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների խախտմամբ:

ՀՊԳ ղեկավարը նաև անդրադարձել է հանրային պաշտպանի կողմից Ամբաստանյալին բարեխիղճ իրավաբանական օգնություն չտրամադրելուն և գործի ընթացքի մասին չտեղեկացնելուն:

## **2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Պալատի նախագահի 06.04.2021թ. թիվ 65-Ա/ԿԳ-21009 որոշման հիման վրա փաստաբան Անժելյա Հոբոսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք) 3.5.5 ենթակետի խախտման հատկանիշներով:

06.04.2021թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող Վերոնիկա Ալեքսանյանին (այսուհետ նաև՝ Նախապատրաստող):

## **3. Դիմողի և Փաստաբանի համառոտ բացատրությունները, վկաների ցուցումները.**

### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.**

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է բացատրություն, որով պնդել է Դիմումով իր հայտնածը:

Պալատի խորհրդի նիստին Դիմողը, թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն խորհրդի նիստին չի ներկայացել:

### **3.2 Փաստաբանի համառոտ բացատրությունը.**

Փաստաբան Անժելյա Հոբոսյանի կողմից ներկայացված բացատրությունը Պալատում մուտքագրվել է 18.03.2021 (մուտք՝ 624-21) թվականին:

14.05.21թ-ին փաստաբան Անժելյա Հոբոսյանը կարգապահական գործը նախապատրաստողին ներկայացրել է բացատրություն:

Բացատրությամբ փաստաբանը հայտնել է, որ ինքը պատշաճ կերպով իրականացրել է ամբաստանյալ Գարսևան Գևորգյանի շահերի պաշտպանությունը, մասնավորապես՝ փաստաբանը հայտնել է, որ ՀՊԳ ղեկավարի Վ/1779/19-Ա որոշմամբ նշանակվել է թիվ ԵԴ/0226/01/19 քրեական գործով ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասով ամբաստանյալ Գարսևան Գևորգյանի շահերի պաշտպան Երևան քաղաքի (ավանի նստավայր) առաջին ատյանի դատարանում:

Վերջինիս նշել է, որ ծանոթացել է քրեական գործի նյութերին, պատշաճ կերպով

մասնակցել է տեղի ունեցած դատական նիստերին, բազմիցս հարցումներ է կատարել Ամբաստանյալի առողջական վիճակի վերաբերյալ, որոնց պատասխանները ներկայացրել է Ամբաստանյալի խափանման միջոցի քննարկման ժամանակ, ներկայացրել է վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ:

Փաստաբանը նաև նշել է, որ մի քանի անգամ միջնորդություն է ներկայացրել Ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխելու մասին, որոնք մերժվել են: Փաստաբանը նաև ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ նախապես իրազեկելով իր պաշտպանյալին, իսկ հետագայում կայացված որոշումը չի ուղարկել, քանի որ վերաքննիչ քրեական դատարանը իր կողմից կայացված որոշումները պարտադիր ուղարկում է ամբաստանյալներին:

Հանրային պաշտպանը մասնակցել է տվյալ գործով բոլոր դատական նիստերին, որոնք սկսվելուց առաջ հնարավոր է եղել զրուցել պաշտպանյալի հետ:

Փաստաբանն ընդունել է, որ միայն մեկ անգամ է տեսակցել Ամբաստանյալին և հավելել, որ Ամբաստանյալն է ցանկացել, որպեսզի ինքը տեսակցի միայն նույն գործով մյուս ամբաստանյալ իր ընկերոջը: Ամբաստանյալը երբևէ չի հայտնել իր հետ առանձին տեսակցություն ունենալու ցանկություն, որը Փաստաբանը մերժեր:

### **3.3 Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:**

#### **4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.**

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 01.06.2021թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Հանրային պաշտպանը առարկություն է ներկայացրել, որը ՀՀ ՓՊ-ում մուտքագրվել է 04.06.21թ-ին

Հանրային պաշտպան Ա.Հոբոսյանը իր առարկությամբ հայտնել, որ կարգապահական գործը նախապատրաստող՝ Վերոնիկա Ալեքսանյանի կողմից կազմված եզրակացության 2-րդ կետում չի նշվել, որ 19.01.21թ.-ին վերջինիս առանձնատեսակցություն է ունեցել ամբաստանյալ Գարսևան Գևորգյանի հետ հենց հանրային պաշտպանի նախաձեռնությամբ, այնինչ Գարսևան Գևորգյանը երբեք չի դիմել ՔԿՀ-ում առանձին հանդիպելու խնդրանքով, որով պայմանավորված վերջիններս չեն օգտվել անձնատեսակցություն ունենալու իրենց իրավունքից:

Փատաբանը հայտնել է, որ Եզրակացության 7-րդ կետի 3-րդ ենթակետում չի նշվել այն հանգամանքը, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո պաշտպանը սահմանված ժամանակահատվածում վերացրել է ձևական սխալը և կրկին առանձին-առանձին բողոքներ է ներկայացրել երկու պաշտպանյալների խափանման միջոցը փոփոխելու վերաբերյալ, այդ կապակցությամբ ներկայացրել է այլ գործերով դատարանի կողմից կայացրած որոշում և դատախազի կողմից ներկայացված վերաքննիչ բողոք, որից ըստ փաստաբանի ակնհայտ է դառնում, որ հնարավոր է որ մի քանի ամբաստանյալների կալանքի վերաբերյալ կազմվել է մեկ դատավարական փաստաթուղթ, այդ փաստի հաստատման համար ՀՀ ՓՊ ներկայացրել է թիվ ԵԴ/0944/01/18 քրեական գործող դատական ակտ,որտեղ մեղադրող Գ.Հովակիմյանը մեկ վերաքննիչ բողոք էր ներկայացրել երեք ամբաստանյալների համար և դատարան էլ մեկ դատական ակտով երեք -ի մասով որոշում էր կայացրել, ամեն դեպքում

դատարանը գտել է, որ առանձին բողոքներ պետք է ներկայացվեն, որը ա.Հոբոսյանը նշել է որ կատարել է ապահովելով հենց Գարսևան Գևորգյանի իրավունքի իրացումը:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 01.06.2021թ.

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 14.09.2021թ. ժամը 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

##### **5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. ՀՊԳ ղեկավարի Վ/1779/19-Ա որոշմամբ հանրային պաշտպան Անժելա Հոբոսյանը նշանակվել է թիվ ԵԴ/0226/01/19 քրեական գործով ամբաստանյալ Գարսևան Գևորգյանի շահերի պաշտպան Երևան քաղաքի առաջին ատյանի դատարանում: *Սույն փաստը հաստատվում է դիմումով և Փաստաբանի ներկայացրած առարկությամբ, ինչպես նաև սույն փաստը հաստատված է համարվում, քանի որ կողմերը չեն վիճարկել:*

2. Հանրային պաշտպան Անժելա Հոբոսյանը ամբաստանյալ Գարսևան Գևորգյանի տեսակցել է դատական նիստերից առաջ և հետո, ինչպես նաև 19.01.21թ.ին, ժամը 13:35-14:45 ընկած ժամանակահատվածում այցելել է «Նուբարաշեն» ՔԿՀ և տեսակցել ամբաստանյալ Գարսևան Գևորգյանին: *Սույն փաստը հաստատվում է դիմումով և Փաստաբանի ներկայացրած առարկությամբ, ՀՀ ԱՆ Նուբարաշեն ՔԿՀ պեպ արդարադատության գնդապետ՝ Գ. Գևորգյանի 26.02.21թ-ի թիվ՝ 40/18-3 658 գրությամբ:*

3. 10.07.2020թ. թիվ ԵԴ/0226/01/19 քրեական գործով Գարսևան Գևորգյանի պաշտպան Անժելա Հոբոսյանի կողմից առաջին ատյանի դատարանի 2020թ.-ի հունիսի 24-ի թվով երկու որոշումների դեմ բերել է վերաքննիչ բողոք, որը վերադարձվել է: *Սույն փաստը հաստատվում է թիվ՝ ԵԴ/0226/01/19 քրեական գործով «վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 27.07.20թ.-ի որոշմամբ:*

4. Վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո պաշտպան Անժելա Հոբոսյանը սահմանված ժամանակահատվածում վերացրել է ձևական սխալը և կրկին առանձին-առանձին բողոքներ է ներկայացրել երկու պաշտպանյալների խափանման միջոցը փոփոխելու վերաբերյալ: *սույն փաստը հաստատված է համարվում, քանի որ կողմերը չեն վիճարկել:*

**6. Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված 10.09.21թ.-ի տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Անժեյա Հոբոսյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 10.11.1997 թվականին: 2017-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է երկու կարգապահական վարույթ, չհաշված սույն կարգապահական գործը: Վերջինիս նկատմամբ հարուցված երկու կարգապահական վարույթները գտնվում են գործ նախապատրաստող անձանց մոտ:

**7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

***Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Անժեյա Հոբոսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է Կարճման՝ հեղինակ պատճառաբանությամբ:***

**Կանոնագրի 3.5.5 ենթակետի համաձայն՝** *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

*ա. նյութերի ուսումնասիրությունը,*

*բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,*

*գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հեղևանքների առաջացման մասին իրազեկումը,*

*դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:*

Վերոգրյալը հաշվի առնելով խորհուրդն անհրաժեշտ է համարում պարզել, թե

▪ *արդյոք փաստաբան Անժեյա Հոբոսյանը վստահորդին տեղեկացրել է գործի ընթացքի մասին և պատասխանել նրան հեղաքրքրող հարցերին.*

▪ *արդյոք փաստաբան Անժեյա Հոբոսյանը բարեխիղճ իրավաբանական օգնություն է ցույց տվել վստահորդին:*

Վերը նշված փաստերից Դիմողին գործի ընթացքի մասին տեղեկացնելու, ինչպես նաև վստահորդին լսելու և պաշտպանության մարտավարություն քննարկելու Փաստաբանի վարքագիծը հաստատված է համարվում գործի քննության ընթացքում կողմերի տված բացատրություններով, մասնավորապես՝ Հանրային պաշտպան Անժեյա Հոբոսյանը ամբաստանյալ Գարսևան Գևորգյանի տեսակցել է դատական նիստերից առաջ և հետո, ինչպես նաև 19.01.21թ.ին, ժամը 13:35-14:45 ընկած ժամանակահատվածում այցելել է «Նուբարաշեն» ՔԿՀ և տեսակցել ամբաստանյալ Գարսևան Գևորգյանին:

Ինչ վերաբերում է Փաստաբանի կողմից Դիմողին բարեխիղճ իրավական օգնություն չտրամադրելու վարքագիծը պետք է քննարկել փաստաբանի իրականացված իրավաբանական գործողությունների համատեքստում:

Այսպես՝ 21.04.2020 թվականին Անժեյյա Հոբոսյանը համավարակի հետ կապված միջնորդություն է ներկայացրել դատարանին ամբաստանյալ Գարսևան Գևորգյանի նկատմամբ որպես խափանման ընտրված կալանավորումը վերացնելու վերաբերյալ, որը մերժվել է:

21.06.2020 թվականին Անժեյյա Հոբոսյանը կրկին միջնորդություն է ներկայացրել դատարանին ամբաստանյալ Գարսևան Գևորգյանի նկատմամբ որպես խափանման ընտրված կալանավորումը վերացնելու վերաբերյալ, որը մերժվել է:

08.07.2020 թվականին Անժեյյա Հոբոսյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք թիվ ԵԴ/0226/01/19 քրեական գործով առաջին ատյանի դատարանի 2020թ.-ի հունիսի 24-ի որոշուման դեմ, որը վերադարձվել է: Վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո պաշտպան Անժեյյա Հոբոսյանը սահմանված ժամանակահատվածում վերացրել է ձևական սխալը և կրկին առանձին-առանձին բողոքներ է ներկայացրել երկու պաշտպանյալների խափանման միջոցը փոփոխելու վերաբերյալ:

**Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:**

**Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:**

Կարգի նշյալ իրավադրույթներից հետևում է, որ կարգապահական վարույթի կողմերից յուրաքանչյուրը՝ թե՛ դիմողը և թե՛ պատասխանողը, պետք է ներկայացնեն իրենց պնդումների և ներկայացված փաստարկների ապացույցներն ու հիմնավորումները, իսկ Պալատի խորհուրդը, իրականացնելով կարգապահական գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, իրավական գնահատական է տալիս դրանց: Ընդ որում, իրենց վկայակոչած փաստերը հիմնավորող ապացույցներ չներկայացնելու կամ ոչ բավարար ապացույցներ ներկայացնելու բացասական հետևանքները կրում են կողմերը՝ յուրաքանչյուրն իր վկայակոչած փաստի կամ փաստերի մասով:

Սույն գործով, խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանի կողմից 3.5.5 ենթակետերի խախտում թույլ տալու փաստը չի հաստատվել, քանի որ վերջինիս կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձվել է միայն ձևական թերությունների պատճառով, ինչը ամենին չի վկայում, որ փաստաբանը բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չի տվել, հաշվի առնելով, որ վերջինիս կողմից սահմանված ժամանակահատվածում վերացվել է նշված թերությունները:

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդն ուշադրության արժանի է համարում նաև այն հանգամանքը, որ սույն գործով նշանակված որևէ նիստի Դիմողը չի մասնակցել, թեև եղել է պատշաճ ծանուցված, ինչի արդյունքում խորհրդի անդամները

նաև հնարավորություն չեն ունեցել հարցեր ուղղել վերջինիս իր իսկ նշած փաստերի շուրջ:

**Նկատի ունենալով, որ նշված փաստերը չեն հաստատվել, Խորհուրդն փաստաբանի վարքագիծը չի համարում Կանոնագրքի 3.5.5 ենթակետերին հակասող, ուստի Փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ, 39.7 և 39.8 հոդվածների պահանջներով՝

Խորհուրդը

#### **Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. Փաստաբան Անժեյա Վոլոդյայի Հոբոսյանի (արտոնագիր թիվ 52) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:**

**2. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Անժեյա Վոլոդյայի Հոբոսյանին:**

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Արսեն Հարությունյան

**14 սեպտեմբերի 2021թ.  
թիվ ԿԳ/170-Ա  
ք. Երևան**